ՀՈԴՎԱԾՔԵՐ — СТАТЬИ

ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՎԻԹԽԱՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Ա. ԱԴՈՅԱՆ

Փետրվարի 5-ին ավարտված ՍՄԿՊ XXI արտահերթ համագումարը մեր Հայրենիքի զարգացման յոթնամյա պլանի հաստատմամբ՝ կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանի սկիզբը նշանավորեց։ Սովետական ժողովրդի և ամբողջ առաջավոր մարդկության լուսաշող բաղձանքների հիասքանչ մարմնացումը ներկայացնելով, յոթնամյա պլանն իրավամբ պատմության մեջ չեղած մի անօրինակ թռիչք է, որը մեր երկիրը ընդհուպ մոտեցնում է վեհ նպատակի արդեն ուրվագծվող արևանիստ գագաթներին։

Համագումարի մշակած յոթնամյա պլանն իր վիթխարիությամբ ոչ միայն բերկրանքի ու խնդության ջերմ ալիքով ողողեց աշխարհի բոլոր ափերում պայքարող մեր բարեկամների սրտերը, այլև խորապես բորբոքեց իր մայրամուտն ապրող իմպերիալիզմի ջատագովների չարամտությունը և շփոթություն առաջացրեց նրանց շարքերում։ Եվ դեռ երկու ամիս չի անցել համագումարի փակման օրից, բայց արդեն ակներև է նրա խոշոր ներգործությունը պատմության ընթացքի վրա։

Պարտիայի այս պատմական համագումարում առանձին ուժգնությամբ զրսևորվեց միջազգային կոմունիստական և բանվորական շարժման անսասան միասնությունը, որն արտահայտվեց համագումարին հղած ուղերձներում և հյուր եկած 72 երկրների կոմունիստական և բանվորական պարտիաների պատգամավորների խանդաղատագին ելույթներում, որոնք այնքան ջերմությամբ հնչեցին հինավուրց Կրեմլի կամարների տակ։ Եղբայրական պարտիաների ներկայացուցիչներն իրենց հուզիչ խոսքում անկեղծորեն ընդգծեցին ՍՄԿՊ-ի, որպես կոմունիզմի կառուցման առաջավոր ջոկատի՝ համաշխարհային դերը։ Շեշտելով, որ կոմունիզմի կառուցման համագումարի մշակած ծրագիրը հանդիսանալու է իրենց պայքարի ուղին լուսավորող մի վառ փարոս, եղբայրական պարտիաների պատգամավորներն ու մամուլը միահամուռ նշեցին, որ իրենք պատրաստ են մինչև վերջ պայքարելու խաղաղության և ՍՍՌՄ-ի՝ որպես կոմունիզմի միջնաբերդի, պաշտպանության համար։

Եթե համագումարի խոր վերլուծմամբ ամփոփած սոցիալիզմի հանրագումարները մեծագույն խթան են ծառայելու միջազգային ռևոլյուցիոն շարժման և ազգային-ազատագրական պայքարին, ապա բուն այդ պատմական իրողությունը հարկադրում է կապիտալիզմի երդվյալ գաղափարախոսներին հուսալքված խոստովանել, որ այժմ, անգամ խաղաղ մրցության ասպարեզում, չկա մի ուժ, որն ի վիճակի լինի դիմակայել կոմունիզմի հաղթական երթին։

Համագումարի քննարկած և հաստատած յոթնամյա պլանի կոնտրոլ թվերը մի անգամ ևս զրսևորեցին մեր պարտիայի լենինյան իմաստության խորաթա-

փանցությունն ու գործնականությունը։ Հիրավի, 1959—1965 թվականների տնտեսական զարգացման կոնտրոլ թվերն իրենց անօրինակ ծավալով ու մասշտաբներով առաջիկա տարիներին խոշորագույն հնարավորություններ կընձեռեն մեր երկրին՝ յոթ տարում տալու արդյունաբերական արտադրանքի այնքան աճ, որքան մենք ունեցել ենք վերջին քսան տարում։ Բավական է հիշեցնել, որ յոթնամյակի ընթացքում երկրի զարգացման բոլոր ճյուղերում ներդրվելու է միայն պետական միջոցներից՝ երկու տրիլիոն ռուբլի։ Նման գումարի իրացման հետևանքով հսկայական քայլերով առաջ կընթանա մետաղամշակումը, քիմիական արդյունաբերությունը, վառելանյութի, մեքենաշինության, էներգետիկայի, թեթև և սննդի արդյունաբերությունը, գյուղատնտեսական արտադրությունը, տրանսպորտը։ Ժողովրդական տնտեսության յոթ տարիների մեծ ծրագրի կենսագործմամբ՝ մեր երկիրը պատմական կարճ ժամկետում կկառուցի կոմունիստական հասարակարգի նյութա-տեխնիկական բազան և հաղթանակ կտանի կապիտալիզմի հետ խաղաղ մրցակցության մեջ։

Օգտվելով սոցիալիստական զարգացմանը հատուկ բարձր տեմպերի (8,6 տոկոս) վճռական առավելությունից, մեր երկիրը ժամկետից շուտ կիրագործի պարտիայի մշակած հոյակապ պլանը։ Այժմ արդեն չուգունի, պողպատի, նավթի, քարածխի, երկաթաքարի, ցեմենտի, բրդի գործվածքների արտադրանքի աճի մեր բացարձակ չափերը գերազանցում են ամերիկյան ցուցանիշները։ Սա նշանակում է, որ մենք թևակոխել ենք մրցության որակապես նոր էտապ, որը նշանակալի է նրանով, որ ՍՍՌՄ-ը գերազանցում է ԱՄՆ-ին թե՛ արտադրանքի ամենամյա աճման տեմպերով, թե՛ բացարձակ աճով։ Մենք թե՛ քառապատիկ արագ ենք առաջ շարժվում (ընդունելով ԱՄՆ-ում տարեկան 2 տոկոսի աճ), թե՛ ամեն տարի ավելացնում ենք արտադրանքի աճը, հետևաբար, ասում է ընկեր Ն. Ս. Խրուշչովը, այժմ ամերիկացիներին հասնելը շատ ավելի դյուրին է։

Կոմունիզմի ծավալուն կառուցման արդի էտապը բնորոշվում է այն վիթխարի խնդրով, որը համադումարը դրեց մեր երկրի առջև։ Այժմ,—ասում է Ն. Ս. Խրուշչովը,— մենք թևակոխում ենք կապիտալիզմի հետ տնտեսական մրցության նոր էտապը։ Ներկայումս մեր խնդիրն է հասնել համաշխարհային արտադրության մեջ կապիտալիստական սիստեմի հանդեպ սոցիալիստական սիստեմի գերակշռության, հանրային աշխատանքի արտադրողականությամբ, բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի արտադրությամբ գերազանցել առավել զարգացած կապիտալիստական երկրներին և ապահովել աշխարհում ամենաբարձր կենսամակարդակը։

Ո՞րն է յոթնամյա պլանի՝ կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի կառուցման վեհ սիմֆոնիայի լեյտմոտիվը։ Դա մեր գեղեցիկ ու հզոր Հայրենիքի ինդուստրիալ երթն է։ 1959—1965 թվականներին երկրի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը կավելանա 80 տոկոսով, որից արտադրամիջոցների արտադրությունը՝ 88 տոկոսով, իսկ սպառման առարկաների արտադրությունը՝ 65 տոկոսով։ Ելնելով զարգացման այս մակարդակից, Սովետական Միությունը արտադրանքի մի քանի ամենագլխավոր տեսակների բացարձակ արտադրությամբ կգերազանցի, իսկ ուրիշ ապրանքների արտադրությամբ կմոտենա ԱՄՆ-ի արդյունաբերական արտադրության ներկա մակարդակին։ Մինչև 7-ամյակի վերջը արտադրությունը ամբողջությամբ վերցրած և բնակչության մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական կարևորագույն մթերքների քանակով կգերազանցի ԱՄՆ-ի ժամանակակից մակարդակը։ Այսպես դնելով

հարցը, ընկեր Ն. Ս. Խրուշչովը եզրակացնում է, որ յոթնամյա պլանի կատարումից հետո հավանարար կպահանջվի ևս հինգ տարի, որպեսզի արդյունաբերական արտադրանքի թողարկումով հասնենք և անցնենք Միացյալ Նահանգներից։ Հիրավի, մինչև այդ ժամանակ, գուցե և ավելի շուտ, Սովետական Միությունը աշխարհում առաջին տեղը դուրս կգա ինչպես արտադրության բացարձակ ծավալով, այնպես էլ բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքով։ Դա սոցիալիզմի համաշխարհային պատմական հաղթանակը կլինի միջազգային ասպարեզում կապիտալիզմի հետ խաղաղ մրցության մեջ։

Յոթնամյա պլանը լենինյան ազգային քաղաքականության մեծ գաղափարների գեղեցիկ մարմնացումն է հանդիսանում։ Համագումարը սահմանել է ռեսպուբլիկաների զարգացման այնպիսի համամասնություն, որը նկատի ունի անցյալում հետամնաց, այժմ տնտեսապես և կուլտուրապես առաջադեմ սոցիալիստական ռեսպուբլիկաների բուռն աճը։ Օրինակ, յոթնամյակում, Հայաստանում կներդրվի ավելի քան 12 միլիարդ ռուբլի, արդյունաբերական արտադրանքը կաճի 2,2 անգամ, մետաղամշակումը՝ 3 անգամ, մեքենաշինությունը՝ 3,5 անգամ։ Ռեսպուբլիկայում առաջիկա յոթ տարում կառուցվելու է 3 միլիոն 900 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն։ Խոշոր չափերով կզարգանա գյուղատնտեսությունը, հատկապես պտղաբուծությունը։ Վեր է ամեն կասկածից, որ մեր աշխատավորները ժամկետից շուտ կկատարեն յոթնամյա պլանը և բարձր կպահեն մեր ռեսպուբլիկայի՝ որպես լենինյան շքանշանակրի պատիվը։

Իրագործելով յոթնամյա պլանը, մեր երկրի աշխատավորությունը խոշոր չափերով կավելացնի նյութական բարիքների արտադրությունը և կհասնի նրան, որ ՍՍՌՄ-ում ազգային եկամուտը կաճի 62—65 տոկոսով, սպառման ֆոնդը կավելանա 60—63 տոկոսով։ Առաջիկա տարիներին ոչ միայն նախատեսվում է ցածր վճարվողների աշխատավարձի բարձրացում, այլև բանվորների, ծառայողների և կոլտնտեսականների ռեալ եկամուտների աճում։ Այստեղ պետք է ի նկատի առնել հետևյալ կարևոր հանգամանքը։ Մեզ մոտ աշխատավորների կենսամակարդակը բնորոշվում է ոչ միայն նրանց անմիջական վաստակով։ Անհատական աշխատավարձը մեր երկրում լրացվում է կոլեկտիվ սպառման ֆոնդով՝ լուսավորության, առողջապահության, սոցիալական ապահովագրման, կուլտուրական կարիքների գծով արված վիթխարի հատկացումներով։ Հասարակական սպառման ֆոնդը 1965 թվականին կհասնի 360 միլիարդ ռուբլու, և յուրաքանչյուր աշխատավորին տարեկան կհասնի շուրջ 3800 ռուբլի։ Իսկ սա սկզբունքորեն դումար է։ Որքան մոտենանք կոմունիզմին, այնքան ավելի կաճի հասարակական սպառման ֆոնդը և հենց դա էլ կլինի ժողովրդի բարեկեցության բարգավաճման գլխավոր ուղին։

Աշխատավորության բարօրության ծաղկման վառ ապացույցներից մեկն էլ այն է լինելու, որ մեր երկրում կլինի աշխարհում ամենակարճ աշխատանքային շաբաթը և ամենակարճ բանվորական օրը։ Սրանով էլ ռեալ պայմաններ կստեղծվեն մարդկանց զվարճանքի, հոգևոր հարստացման և բանական վայելքի ու կուլտուրական աճի համար։

Համագումարի նյութերը և որոշումը ամբողջ աշխարհի առջև հրապարակեցին սովետական ժողովրդի անդրդվելի կամքը՝ մաքառել խաղաղության համար։ Բոլորը տեսան, որ ԱՄԿՊ-ն և Սովետական պետությունը ձգտում են գոր-

ծի վերածել կոմունիզմի կառուցման իրենց սքանչելի ծրագիրը, որը չի կարող իրականանալ առանց երկարատև խաղաղության։

Յոթնամյա պլանը ոչ միայն մեր երկրի տնտեսական-տեխնիկական հզոր վերելքի հոյակապ ծրագիրն է, այլև մեր ողջ ժողովրդի հոգևոր կուլտուրայի բարգավաճման փարթամ հիմքը։ Աշխատավորական հոծ զանգվածների դիտակցության բարձրացումը համագումարը համարում է պարտիական կազմակերպությունների կենտրոնական խնդիրը։ Զարգացնել ու ծավալել սովետական քաղաքացիների հոգևկան աշխարհի լավագույն հատկությունները, ահա թե ոմն է լինելու մեր պրոպագանդայի և ողջ դաստիարակչական գործունեության մարտական խնդիրը։ Իսկ դա նշանակում է՝ համառ և համբերատար աշխատանքով մարդկանց դիտակցության մեջ ներարկել կոմունիստական բարոյականության վսեմ սկզբունքները։ Դա նշանակում է հետևողական պայքար ծավալել հասարակական կյանքի, կենցաղի, նիստուկացի բոլոր բնագավառներում մերթ ընդ մերթ զանազան ձևերով դրսևորվող բուրժուական նսամոլության և հակահասարակական երևույթների, աշխատանքի նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի դեմ։ Երկրով մեկ արդեն ծայր առած կոմունիստական բրիգադներ կազմակերպելու մասսայական շարժումը վկայում է այն մասին, որ սովետական նոր մարդը իր դիտակցությամբ բարձրանում է նոր կեցության մակարդակին։

Ահա թե ինչու մեր պարտիայի և պետության գաղափարական ողջ աշխատանքը կոչված է զարգացնելու սովետական մարդկանց նոր հատկությունները, նրանց դաստիարակելու աշխատասիրության և կոլեկտիվիզմի, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի և հայրենասիրության ոգով, նոր հասարակության բարոյականության վեհ սկզբունքներով, մարքսիզմ-լենինիզմի ոգով։

Ճիշտ է այն գրույթը, որ գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների գլխավոր պատճառը պետք է որոնել հասարակական դիտակցության՝ հասարակական կեցությունից ետ մնալու մեջ։ Սոցիալիստական հասարակության որոշ քաղաքացիների դիտակցության մեջ դեռ կա հակասություն՝ առաջավոր սոցիալիստական հայացքները մնում են հաշտ ու խաղաղ հետամնաց տրամադրությունների և քաղքենիության հետ։ Սրան ավելացնենք և այն, որ մեզ համար խորթ աշխարհայացքը դեռևս այս կամ այն ձևով ներգործում է անկայուն մարդկանց վրա բուրժուական գրականության, արվեստի, ռադիոյի, կրոնի և այլ ճանապարհով։ Չպետք է մոռանանք, որ բուրժուական աշխարհի հետ մեր կապերի ընդարձակումը որոշակի հնարավորություններ է ստեղծում խորթ գաղափարների ներթափանցման համար։ Սիստեմատիկ և անդուլ պայքար մղել կապիտալիստական գաղափարախոսության մնացուկների դեմ այս է մեր գաղափարական աշխատանքի կիզակետը։

Ընդգծելով և ըստ արժանվույն գնահատելով սովետական գիտության մեծ նվաճումները, համագումարը նշեց, որ կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանում ավելի է մեծանում գիտության դերը, ուստի և անհրաժեշտ է, որպեսզի սովետական բոլոր գիտնականները ավելի մոտիկ կանգնելով կյանքին, իրենց կարողությունները նվիրեն նոր տեխնիկայի պրոգրեսին, ավելի հարստացնեն սովետական գիտության գանձարանը խորը հետազոտություններով։

Մերկացնելով բուրժուական գաղափարախոսության տարատեսակները, պայքար մղելով ռևիզիոնիզմի դեմ, փիլիսոփաները, տնտեսագետները, պատմաբանները կոչված են ուսումնասիրելու և ընդհանրացնելու սոցիալիզմից կո-

մունիզմին անցնելու օրինաչափությունը, սոցիալիստական արտադրական հարաբերությունների կատարելագործման ուղիները, պետական և կուլտուրական շինարարության նոր երևույթները։

Իդեոլոգիական ֆրոնտի աշխատողները պետք է իրենց ամբողջ աշխատանքի առանցքը դարձնեն ՍՄԿՊ XXI համագումարի նյութերի մշակումն ու պարզաբանումը, նրանց կիրառումը կյանքում։ Նոր խնդիրները պահանջում են մեկընդմիշտ վերջ տալ արդիական պրոբլեմներին երկյուղով մոտենալուն։ Որոշ գիտաշխատողներ երկար տարիների ընթացքում բավարարվում են հայտնի ճշմարտությունների տարբեր ձևերով վերաշարադրմամբ և կրկնությամբ։ Մեր ժողովրդի բազմադարյան անցյալի պատմության և կուլտուրայի ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականների թվում կան այնպիսիները, որոնք տարվում են կենսական նշանակություն չունեցող թեմաներով, անտեսելով այն հարցերը, որոնք ավելի մեծ կարևորություն են ներկայացնում գիտության համար։ Դժբախտաբար երբեմն ոչ միայն պրոպագանդիստական, այլև գիտության կամ դասավանդման գծով տարվող աշխատանքը ծանրացած է դոգմատիկական բեռով։ Ամուլ դոգմատիզմը հաճախ ծնվում է նրանից, որ գիտության որոշ աշխատողներ չեն ցանկանում և հաճախ էլ չեն կարողանում իրականության նոր փաստերն ուսումնասիրել և ինքնուրույն խորհել։ Մաքի ծուլությունը՝ ահա՝ այն փետրալի բարձր, որի վրա թիկնել է դոգմատիզմը,— ասում է ընկ. Կուտուզովը։

Պետք է համարձակորեն առաջ քաշել և լուծել հասունացած նոր խնդիրներ, ընդառաջել մտքի զով հոսանքին, կապել տեսության բոլոր հարցերը կոմունիզմի կառուցման մեծ խնդիրների հետ։ Այդ է մտքի մշակների առաջ դրված պատվարեր խնդիրը։ Անհրաժեշտ է համագումարի նյութերի տեսանկյունով վերանայել գիտությունների ակադեմիայի բոլոր ինստիտուտների, սեկտորների աշխատանքները և հրատարակչական պլանները, գիտական կոլեկտիվների ուշադրությունը կենտրոնացնել համագումարի որոշումներից բխող առավել այժմեական խնդիրների լուծման վրա։ Սա է գիտության զարգացման ուղին։

ՍՄԿՊ-ի XXI համագումարին տված ընկեր Ն. Ս. Խրուշչովի զեկուցումը, պատգամավորների ելույթները, միաձայն ընդունված որոշումը հանդիսանում են ստեղծագործական մարքսիզմի, տեսության և պրակտիկայի անքակտելի միասնության փայլուն օրինակ, մեր պարտիայի լենինյան մտքի հարաճուն վերելքի մի նոր ապացույց։ Իսկապես, որքա՜ն կենսաթրթիռ, որքա՜ն խորը տեսական և պրակտիկ պրոբլեմներ արծարծվեցին համագումարում և հատկապես ընկեր Ն. Ս. Խրուշչովի զեկուցման մեջ։

Արծարծելով և զարգացնելով կոմունիզմի վերաբերյալ մարքս-լենինյան ուսմունքը, ընկեր Ն. Ս. Խրուշչովը նախ և առաջ կանգ է առնում կոմունիզմի երկու փուլերի մեկնարանության վրա։ Սոցիալիզմից անցումը կոմունիզմին համարելով խիստ օրինաչափ պատմական մի պրոցես, նա ընդգծում է, որ չի կարելի կամայականորեն շրջանցել հասարակական զարգացման սոցիալիստական փուլը, այլ զեպի կոմունիզմ անհրաժեշտ է ընթանալ աստիճանաբար, նրա նյութական և հոգևոր նախադրյալների ստեղծման համընթաց։ Քանի դեռ սոցիալիզմի փուլում մենք չունենք նյութական բարիքների առատություն, և մարդիկ տակավին չեն վարժվել կոմունիստաբար աշխատել և ապրել, այդպիսի հանգամանքներում ըստ պահանջմունքների բաշխման կոմունիստական սկզբունքի կիրառումը նվնասեր կոմունիզմի գործին։

Հարցը դնելով այսպես, ընկ. Ն. Ս. Խրուշչովը շեշտում է, որ կոմունիզմի երկու փուլերը իրարից չեն բաժանվում ինչ-որ մի անանցանելի պատնեշով։ Ուստի և կոմունիզմը երևան կգա ոչ թե հանկարծակի, այլ կհանդիսանա սոցիալիզմի անմիջական շարունակությունը և զարգացումը։ Մեր զարգացման ներկա էտապում հենց կան կոմունիզմի շոշափելի ու թանձրացյալ շատ գծեր՝ արտադրության և աշխատանքի կազմակերպման կոմունիստական ձևերը, հասարակական սննդի ծավալումը, դիշերօթիկ դպրոցները, մանկամսուրներն ու մանկապարտեզները և այլն։ Հետևարար, սոցիալիզմից անցումը կոմունիզմին պետք է դիտել որպես անընդհատ պրոցես, ըստ որում մենք այժմ արդեն բացում ենք կոմունիստական հասարակարգի դուռը։

Առաջիկա յոթ տարում մեր երկրում կստեղծվի նյութական առատության հիմքը՝ կոմունիզմի նյութա-տեխնիկական բազան։ Պարտիան առաջնորդվում է այն դրույթով, որ չի կարելի հապճեպորեն կիրառել «հավասարարական կոմունիզմը», որովհետև սոցիալիզմի վերաճումը կոմունիզմի կարող է լինել միայն նյութական արտադրության բարձր զարգացման հիման վրա, սոցիալիզմի օրոք արդեն նվաճված արտադրողական ուժերի անհամեմատ բարձր բազայի վրա։ Սովետական Միության զարգացման ռեալ ընթացքը հիմք է տալիս պնդելու, որ մոտ ապագայում հնարավոր կլինի իրոք բավարարել մեր բնակչության բնակարանային, սննդի, հագուստի պահանջմունքները, դպրոցական աշակերտներին ապահովել ձրի նախաճաշով և ճաշով, բոլոր երեխաների կրթության ու աճման հոգսը վերցնել հասարակության վրա։ Կոմունիստական այս խնդիրների լուծումը պահանջում է յոթնամյա պլանի անթերի կատարումը։

Ընթանալով պարտիայի գծած ուղիով, մեր երկիրը մոտակա տարիներին հնարավորություններ կստանա ավելի կատարելագործելու մարդկանց արտադրահարաբերությունները, որոնց էությունը միլիոնավոր աշխատավորների ընկերական համագործակցությունն է, փոխադարձ աջակցությունը և բարեկամությունը՝ մեծ նպատակին հասնելու համար։ Հույժ ուրախալին այստեղ այն է, որ մեզ մոտ հիմա հանրային աշխատանքը իսկապես դարձել է մարդկանց նոր սոցիալիստական հարաբերությունների, նրանց բարոյական վեհ հատկությունների ցուցանիշը։ Հեռու չէ այն օրը, երբ մեր երկրում աստիճանաբար կվերանան մտավոր և ֆիզիկական աշխատանքի կական տարբերությունները և աշխատանքը կդառնա համակողմանիորեն զարգացած մարդու բերկրանքի աղբյուր ու կենսական անհրաժեշտություն։

Համագումարին տված իր զեկուցման մեջ ընկ. Ն. Ս. Խրուշչովը խորապես լուսաբանեց և նյութական բարիքների բաշխման պրոբլեմը։ Ելնելով մարքսիստական այն դրույթից, որ յուրաքանչյուր բաշխման եղանակ պայմանավորված է արտադրության եղանակով, նա ընդգծեց, որ այսօր մեր պարտիան շարունակում է իրագործել յուրաքանչյուրից՝ ըստ իր ունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր աշխատանքի սոցիալիստական սկզբունքը։ Բարիքների բաշխումը (մեծ մասով) այժմ կատարվում է այն պայմանի համեմատ, թե յուրաքանչյուրը հանրային արտադրության մեջ որքան հանրօգուտ աշխատանք է ներդրել։

Քանի դեռ հասարակությունը մնում է կոմունիզմի առաջին փուլում, ուժի մեջ է մնում և հավասար աշխատանքի համար հավասար վարձատրության սկզբունքը, որը նշանակում է, թե տարբեր մարդկանց նկատմամբ կիրառվում է միևնույն իրավական չափանիշը։ Սոցիալիզմի օրոք բաշխման ասպարեզում

կիրառել հավասարարական սկզբունք։ Նշանակում է խափանել մարդկանց շահագրգռության վճռական ազդակը և վարկաբեկել կոմունիզմը։

ՍՄԿՊ XXI համագումարը հանձին Ն. Ս. Խրուշչովի՝ հստակ և սպառիչ պատասխան տվեց սոցիալիստական սեփականության կոլտնտեսային-կոոպերատիվ և համաժողովրդական ձևերի մերձեցման ուղիների հարցին։ Որ ապագայում սեփականության այդ երկու ձևերը կձուլվեն մեկ միասնական կոմունիստական սեփականության մեջ՝ դա վեր է ամեն կասկածից։ Բայց հարցի էությունն այն է, որ ներկա էտապում կոլտնտեսային ձևը դեռ երկար կարող է ծառայել գյուղի արտադրողական ուժերի զարգացմանը։ Անրաժանելի ֆոնդերի աճը, կոլտնտեսային հանրային արտադրության ծավալումը, գյուղատնտեսական աշխատանքի վերածումը ինդուստրիալ աշխատանքի տարատեսակի, գյուղատնտեսության տեխնիկական հզորության աճը, այս ամենը կնպաստեն համաժողովրդական և կոլտնտեսային արտադրամիջոցների հետագա յուրօրինակ ձուլմանը։ Մեր խնդիրն է գյուղատնտեսության հզոր վերելքի հիման վրա ապահովել գյուղական բնակչության կենսամակարդակի արմատական բարելավումը։

Զարգացնելով մարքսիզմ-լենինիզմի այն դրույթը, որ լիակատար կոմունիզմի ժամանակ պետությունը մահանում է, ընկեր Ն. Ս. Խրուշչովը նշում է, որ դա սոցիալիստական պետականությունը կոմունիստական հանրային ինքնավարության վերածվելու հարցն է։ Կոմունիզմի օրոք ևս կմնան պետական արդի ֆունկցիաների պես որոշ հասարակական ֆունկցիաներ, բայց նրանց իրականացման բնույթը և եղանակները այլ կլինեն, քան զարգացման ներկա փուլում։ Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում սոցիալիստական պետության դերը չի նսեմանում։ Առաջիկայում պետք է ավելի զարգանա սովետական դեմոկրատիան և պետական օրգանների որոշ ֆունկցիաների հանձնումը հասարակական կազմակերպություններին պետք է կատարվի առանց շտապողականության։ Ուլացնել մեր պետությունը ներկայումս,— ասում է ընկեր Ն. Ս. Խրուշչովը,— նշանակում է օգնել մեր թշնամիներին։ Մենք ընթանում ենք դեպի պետության մահացում մեր Զինված Ուժերի և պետական անվտանգության օրգանների առավել ամրապնդման ճանապարհով։ Քանի կա կապիտալիստական սիստեմ աշխարհիս վրա՝ կոմունիզմի օրոք ևս կմնա պրոլետարական պետություն՝ իմպերիալիզմի մեքենայությունները խափանելու համար։

Սովետական սոցիալիստական սիստեմի մեծագույն նվաճումը՝ սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակն է մեր երկրում։ Դրա հետևանքով ՍՍՌՄ-ում բացառված է կապիտալիզմի վերականգնման վտանգը։ Մենք այժմ ի վիճակի ենք խափանելու ամեն թշնամու յուրաքանչյուր հարձակում։ Յուրաքանչյուր իրագործմամբ ռեալ նախադրյալներ կստեղծվեն կանխելու պատերազմի վտանգը։

Սոցիալիստական համաշխարհային սիստեմի զարգացմամբ առաջացել են հասարակական կյանքի նոր օրենքներ։ Տնտեսության սոցիալիստական սիստեմի պլանաչափ, համամասնական զարգացման օրենքը,— նշում է ընկեր Ն. Ս. Խրուշչովը,— հիմք է տալիս այն տեսական ենթադրության համար, որ սոցիալիզմ կառուցող բոլոր երկրները այս կամ այն չափով միաժամանակ կթևակոխեն կոմունիստական հասարակարգի կառուցման բարձրագույն փուլը։

Գնալով ուղղվում է սոցիալիստական բոլոր երկրների զարգացման ընդհանուր գիծը։

Քննության առնելով դեպի կոմունիզմ ընթացող ժողովուրդների կոնկրետ ուղիների հարցը, Ն. Ս. Խրուշչովը շեշտեց, որ մենք պետք է հաշվի առնենք տարբեր երկրների պատմական պայմանների խոշոր բազմազանությունը։ Դրանցով էլ պայմանավորվում է դեպի կոմունիզմը հասարակության շարժման ընդհանուր օրինաչափությունների, իրականացման եղանակների, միջոցների ու ձևերի յուրահատկությունը։ Կոմունիզմի ուղիով ընթացող բոլոր երկրների զարգացման մեջ գլխավորն ու որոշիչը նրանց բոլորի համար ընդհանուր օրինաչափություններն են, այլ ոչ թե դրանց հատուկ դրսևորումները։ Այստեղից էլ ակնհայտ է դառնում հարավսլավական ռևիզիոնիստների ազգային յուրահատկության «տեսության» ողջ սնանկությունը։ Մերկացնելով այդ «տեսության» ռևիզիոնիստական բնույթը, ընկեր Ն. Ս. Խրուշչովն ասում է, որ չի կարելի Սովետական Միության փորձը մեխանիկորեն այլ երկրներում կիրառել, որ սոցիալիզմի կառուցման ասպարեզում մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական կիրառման վառ օրինակներ է տալիս և Չինաստանի Կոմունիստական պարտիան, որին անհիմն դրպարտում են Հարավսլավիայի ղեկավարները։ Այն գլխավորը, որը կոմունիստական պարտիաներին բաժանում է ժամանակակից ռևիզիոնիստներից՝ դա կապիտալիզմի դեմ, բանվոր դասակարգի ազատագրման համար, սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում դասակարգային համերաշխությունն պահպանումն ու ամրապնդումն է։

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXI համագումարը հանդիսացավ ստեղծագործական մարքսիզմի, լենինյան կոլեկտիվ մտքի, տեսության ու պրակտիկայի միասնության մի վառ օրինակ, որը դրսևորեց ժամանակակից ներքին և արտաքին իրադարձությունների, հասարակական զարգացման տենդենցների և օրինաչափությունների բացահայտման ու խոր ըմբռնման, մարքս-լենինյան տեսական մտքի նոր աստիճան։

Որպես պարտիայի բարձրագույն ղեկավար օրգան, համագումարն ամբողջ աշխարհի առջև մի անգամ ևս ցուցադրեց ՍՄԿՊ-ի շարքերի լենինյան միասնությունը, նրա Կենտկոմի վարած իմաստուն քաղաքականությունը ու նրա հանդեպ մեր ժողովրդի տածած խորը վստահությունը։ Լիովին հավանություն տալով Կենտկոմի վարած քաղաքական գծին և խոշորագույն ձեռնարկումներին, համագումարը գոհունակությամբ նշեց, որ Կենտրոնական Կոմիտեն ճիշտ է վարվել մերկացնելով ու ջախջախելով Մալենկովի, Կագանովիչի, Մոլոտովի, Բուլգանինի և Շեպիլովի հակապարտիական արգահատելի խմբակը։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի կառուցման համագումարի մշակած հոյակապ ծրագիրը հանդիսանում է մեր գործունեության ղեկը, մեր հոգևոր ու գաղափարական աճման անսպառ աղբյուրը, կոմունիզմի կառուցման մեր իմաստուն պլանը։